

Կրթություն

Շաբաթաթերթ «Krtutian» (education) weekly «Кртутіан» (образование) еженедельник 08.02.2023թ. չորեքշաբթի թիվ 6 (1083)

Տյառնընդառաջ (Տրևեգ)

Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին ամեն տարի՝ *փետրվարի 14-ին՝ Քրիստոսի Սուրբ Ճննդյան* և *Աստվածհայտնության* օրվանից 40 օր հետո, մեծ հանդիսավորությամբ նշում է քառասուն օրական մանուկ **Հիսուսին** տաճարին ընծայաբերելու տոնը՝ **Տյառնընդառաջը**: Տյառնընդառաջ՝ նշանակում է *Տիրոջն ընդառաջ գնալ*:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի տնօրինությամբ՝ *Տյառնընդառաջը* հռչակվել է **նորապսակների օրհնության օր**:

Տյառնընդառաջի տոնակատարությունները սկսվում են *փետրվարի 13-ին*: Երեկոյան ժամերգության ընթացքում կատարվում է **Անդաստանի** (արտերի և այգիների) **օրհնություն**, որը խորհրդանշում է ձմռան ավարտի մոտենալը և *գարնանամուտը*: ժամերգության ավարտին կատարվում է *մոմի օրհնություն*: Հավատացյալներն օրհնված մոմերից վառում են իրենց մոմերը՝ **Քրիստոսի** փրկարար լույսի խորհրդանշան իրենց հետ տանելով տուն:

Ժողովրդական սովորույթի համաձայն՝ օրհնված մոմի կրակով են վառում նաև *Տյառնընդառաջի* խարույկը: Ըստ **Սուրբ Գրիգոր Տաթևացու**՝ խարույկի կրակը բորբոքելիս հայցում ենք Աստվածային սիրո հուրը: Ինչպես **Տիրոջը** տաճարին ընծայելու ժամանակ ժողովուրդը ջախերով և կանթեղներով ելավ **Նրան** ընդառաջ, մենք էլ նույն օրհնակով կրակ ու ջահ ենք վառում և **Տիրոջ** գալստյան նախատոնակը կատարում: Հեթանոսներն **Աստծո** պատիվը կրակին էին մատուցում, իսկ մենք կրակը, որպես **Քրիստոսի** ծառա, բերում ենք **Նրան** ծառայեցնելու:

Տյառնընդառաջը Տիրոջն ընդառաջ գնալու հրավեր է բոլորին: **Քրիստոսը՝ Աստծո Միածին Որդին**, երկնքից խոնարհվեց և մեր *փրկության* համար աշխարհ եկավ: Սա Աստվածային սիրո գերագույն դրսևորումն է **Արարչից** հեռացած արարածի հանդեպ: *Մարդացած Աստվածորդին* ամեն պահ դիմում է մեզ. **«Եկե՛ք Ինձ մոտ, բոլոր հոգևածներդ ու բռնավորվածներդ, և ես ձեզ խաղաղություն կպարգևեմ»** (Մատթ. ԺԱ 28): Հաջորդ քայլը մերն է: Յուրաքանչյուրս պետք է անսասն **Տիրոջ** ձայնին, քանզի ով **Նրա** հետեւից է գնում, **«խավարի միջով չի քայլի, այլ կընդունի կյանքի լույսը»** (Հովհ. Ը 12):

Ըստ *Ավետարանի՝ Հովսեփին* ու *Մարիամը* Բեթղեհեմում 40 օր մնալուց հետո վերցնում են մանուկ **Հիսուսին** և գնում Երուսաղեմ **Նրան** ներկայացնելու **Տիրոջը** (Ղուկ. Ա 22): Նրանց ընդառաջ է գալիս **Սիմոն** անունով **Աստծո** ծառան, ով **Տիրոջից** խնդրել էր իրեն այնքան կյանք տալ, մինչև և տեսնի մարդկության **Փրկչին՝ Աստծո Որդուն**: Սրբազան ավանդության համաձայն, երբ տեղ են հասնում, **Աստծո** հրամանով փակված տաճարի արեւելյան դուռը բացվում է:

Տյառնընդառաջի տոնական *Սուրբ Պատարագից* հետո բոլոր եկեղեցիներում կատարվում է *նորապսակների օրհնության կարգ*:

Սովորության համաձայն՝ *Տյառնընդառաջի* տոնին նվերներով այցելում են նորապսակներին:



Խորհրդարան

Ազգային ինքնության և արժեքների հենքով

Ազգային ժողովի նախաձեռնությամբ՝ անցկացվել է *«Ոչ ֆորմալ ուսուցման արտադպրոցական դաստիարակության ոլորտի օրենսդրական կարգավորման հիմնախնդիրները, լուծման ուղղությունները»* թեմայով աշխատանքային քննարկում, որը կազմակերպվել էր Միջազգային հանրապետական ինստիտուտի (ՄՀԻ) աջակցությամբ՝ ԱՄՆ ՄԶԳ «Հայաստանում ընտրությունների և քաղաքական գործընթացների ամրապնդում» ծրագրի շրջանակում:

Քննարկմանը բացման խոսքով հանդես են եկել ՀՀ ԿԳՄՍ նախարար **Ժաննա Անդրեասյանը** և ՀՀ ԱԺ կրթության, գիտության, մշակույթի, սփյուռքի, երիտասարդության և սպորտի մշտական հանձնաժողովի նախագահ **Սիսակ Գաբրիելյանը**:

«Հայաստանի Հանրապետության մշակույթի պալատության և զարգացման 2023-2027 թթ. ռազմավարությունը և ռազմավարության գործողությունների պլանը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի՝ արտադպրոցական դաստիարակության հետ կապակցված կարգավորումները ներկայացրել են ԿԳՄՍ նախարարի տեղակալներ **Արա Խզմայանը** և **Ալֆրեդ Քոչարյանը**:

Հարունակությունը՝ էջ 2

Մայրենի

«Բարբառը մեր հարստությունն է»

Փետրվարի 21-ը նշվում է որպես **Մայրենի լեզվի միջազգային օր**: Այս կապակցությամբ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, Լեզվի կոմիտեի հետ համատեղ, անցկացնում է աշակերտների հեղինակային տեսանյութերի մրցույթ՝ *«Բարբառը մեր հարստությունն է»* խորագրով:

Համաձայն մրցութային կանոնների՝ յուրաքանչյուր դպրոց կարող է ներկայացնել մինչև 1 րոպե տևողությամբ մեկ տեսանյութ, որում հայերենի որևէ բարբառով կներկայացվի մայրենի լեզվին նվիրված բեմականացում կամ ազատ ոճի այլ մտահղացում: Դպրոցները պետք է դրանք հրապարակեն իրենց սոցիալական հարթակներում #խոսունենքբարբառով նշիչով նշելով **ԿԳՄՍ նախարարության** էջը:

Մրցույթին մասնակցելու ցանկացողներն իրենց տեսանյութերի հղումները պետք է ուղարկեն **մինչև 2023 թ. փետրվարի 14-ը ներառյալ, mayreni@escs.am էլ. փոստին**: Վերոնշյալ չափանիշներում չհամապատասխանող տեսանյութերը չեն դիտարկվի: Լավագույնները կհրապարակվեն նախարարության սոցիալական հարթակներում:

Մայրենիի միջազգային օրվա շրջանակում դպրոցներին առաջարկվում է նաև, որպես սոցիալական արշավ, իրականացնել ուսումնական նախագծեր՝ նվիրված մայրենի լեզվին, **փետրվարի 14-21-ը** դրանք հրապարակել դպրոցների պաշտոնական հարթակներում (**Ֆեյսբուք, Ինստագրամ**)՝ **#մերմայրենին** **#մայրենիամանենուր** նշիչներով՝ նշելով **ԿԳՄՍ նախարարության** էջը:

Նախատեսվում է ԿԳՄՍ-ի սոցիալական հարթակներում Մայրենիի նախընթաց շաբաթվա ընթացքում իրականացնել նաև մեկ այլ սոցիալական արշավ՝ հրապարակել օտար բառեր և դրանց համարժեք հայերեն տարբերակները՝ օգտագործելով **#եղընտրումեն հայերենը** կամ **#հայերենհամարժեքը** նշիչները: Դպրոցները եւս կարող են միանալ այս նախաձեռնությանն իրենց սոցիալական էջերում: Հայերենի համարժեքների կարելի է ծանոթանալ Լեզվի կոմիտեի կայքի *«Հորդորակ»* շարքում՝ <https://bit.ly/2B2h8OG>

Նշենք, որ համաձայն ընթացակարգի՝ մրցույթի և արշավի վերաբերյալ շրջաբերական գրությամբ տեղեկացվել են նաև ՀՀ դպրոցները:

ՀՀ ԿԳՄՍ-ն հասարակայնության հետ կապերի և տեղեկատվության վարչություն

Կառավարության նիստում

Ազգային ինքնության եւ արժեքների հենքով

Դպրոցների օրինակելի կանոնադրությունում փոփոխությունների նախագիծը հաստատվել է

ՀՀ կառավարության նիստում գործադիրը հավանության է արժանացրել պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների օրինակելի կանոնադրությունում փոփոխություններ կատարելու մասին նախագիծը:

Սահմանվել է, որ նոր խմբագրությամբ շարադրվող օրինակելի կանոնադրությունը կիրառելի է այն պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների համար, որոնցում տնօրենները նշանակվել են սույն որոշման ուժի մեջ մտնելուց հետո:

Համաձայն որոշման ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարը, մարզպետները, ինչպես նաեւ Երեւանի քաղաքապետը (առաջարկությամբ) ըստ ենթակայության, պետք է ապահովեն նշված պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների կանոնադրությունների փոփոխությունը՝ տնօրենի նշանակումից հետո մեկամսյա ժամկետում:

2021թ. մարտին Աժ-ի կողմից ընդունվել են «Հանրակրթության մասին» օրենքի փոփոխությունները, որով հանրակրթական ուսումնական հաստատությունների կառավարման համակարգի բարելավման ուղղությամբ գործադիր երկու մարմինների գործառույթները տարանջատվել են: Օրենքով սահմանված կարգով կառավարման համակարգում առավել ճկուն եւ արդիական մոտեցումներ են ներդրվել մասնավորապես՝ երկու գործադիր մարմիններին՝ տնօրենին եւ վարչատնտեսական մասի համակարգողին, հնարավորություն է ընձեռվում իրենց լիազորությունների շրջանակում հաստատությունն արդյունավետ կառավարել, կրթական գործընթացի պատշաճ կազմակերպման շրջանակում համագործակցել, իրականացնել աշխատանքի բաշխում եւ վերահսկում: Բացի դրանից՝ հստակեցվել են պատասխանատվության շրջանակները:

Հանրակրթական ուսումնական հաստատությունների կանոնադրությունում կատարված կարգավորումների արդյունքում հաստատություններում կարծրամա գործընթացի կազմակերպման արդյունավետությունը, ինչպես նաեւ հնարավորինս անխաչընդոտ կրթական դպրոցի կառավարման, խորհրդակցական մարմինների, կրթական գործընթացի մասնակիցների գործառույթների իրականացումը:

Կհստակեցվեն նաեւ դպրոցի սեփականության, դրան ամրացված գույքի եւ ֆինանսատնտեսական գործունեության, դպրոցի վերակազմակերպման եւ լուծարման հետ կապված իրավահարաբերությունները:

Հանրային քննարկում

21 օր բացակայությունը կհամարվի հարգելի

ՀՀ ԿԳՄՍ նախարարությունը հանրային քննարկման է ներկայացրել նախարարոցական հաստատություններ սաների ընդունելության կարգում փոփոխություն անելու մասին նախագիծը:

Գործող կարգով սահմանված է, որ նախադպրոցական ուսումնական հաստատության սանի ազատումը հաստատությունից կատարվում է ուսումնական տարվա ընթացքում սանի, անկախ պատճառից, 75 աշխատանքային օր բացակայելու դեպքում:

2021-2022 ուսումնական տարվա ընթացքում նախադպրոցական ուսումնական հաստատությունների սաների բացակայությունների պատճառների վերլուծության արդյունքում պարզվել է, որ հատկապես աշնանային եւ ձմեռային ամիսներին երեխաների բացակայությունները մեծ մասամբ պայմանավորված են սուր շնչառական վարակների տարածմամբ:

Նախագծով նախատեսվում է երեխայի հսկողությունը իրականացնող առողջության առաջնային պահպանման բժշկական կազմակերպության կողմից տրված՝ սահմանված ձեւի փաստաթղթի հիման վրա հիվանդության պատճառով չհաճախած օրերի բացակայությունը համարել հարգելի, բայց ոչ ավելի, քան տվյալ ուսումնական տարվա ընթացքում 21 օր:

Նախագծի ընդունման արդյունքում 2-3 անգամ որել է հիվանդության պատճառով բացակայած սաները դուրս չեն մնա հաստատությունից, ինչպես գործող կարգի դեպքում է տեղի ունենում, այլ հիմնավոր փաստի առկայությամբ սանը կշարունակի ներգրավված մնալ նախարարոցական կրթության մեջ:

Յեղիսե ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

սկիզբը՝ էջ 1

Արա Խզմալյանի խոսքով՝ 2023-2027 թթ. ռազմավարության հիմքում ընկած է ազգային ինքնության եւ արժեքների հենքի վրա ստեղծված մշակույթի պահպանումը, զարգացումը, տարածումը ու հանրահռչակումը, ազգային եւ համամարդկային արժեքների հետ զուգորդումն ու հարողակցումը, համընդհանուր ներառականության ապահովումը, մշակույթի եւ արվեստի հասանելիությունը, կառավարման ժամանակակից համակարգերի ներդրումը, մշակույթի մեկենասության ինստիտուտի ներդրումը եւ աշխարհի մշակութային քարտեզում հայկական մշակույթի դիրքավորումը:

Նախարարի տեղակալի նշմամբ՝ այս նպատակներին էլ ձեռավորվել են ժամանակակից արվեստի ոլորտում նախագծի հիմնական ուղղությունները:

Կառավարման մոդելների արդիականացում

«Բազմաթիվ ձեռնարկներ, օրենսդրական նորմեր, կետեր այլեւ մրցունակ չեն եւ չեն կարողանում դիմակայել այսօրվա մարտահրավերներին, պահանջների որակին, կյանքի ռիթմին, ինչն էլ անխուսափելի է դարձնում փոփոխությունները՝ ինչպես օրենսդրական, այնպես էլ կարգային քաղաքականության դաշտում:

«ՊՈԱԿ-ների մասին» օրենքում կատարված լրամշակման շնորհիվ՝ հնարավորություն տրվեց լիազոր մարմնին մշակել տնօրենների մրցույթի կարգ: Նկատի ունենալով նաեւ տվյալ ոլորտի առանձնահատկությունները՝ մենք կարողացանք լրջագույն բարեփոխումներ իրականացնել թատերահամերգային կազմակերպություններում, տնօրենների ընտրության հարցում: Կարգային փոփոխություններն էական նշանակություն ունեն տվյալ կառույցի առաջընթացի համար՝ նաեւ բովանդակային ծրագրերի եւ եկամուտների աճի առումով: Սա բխում է նաեւ այն գաղափարից, որ թատերահամերգային կազմակերպություններում պետք է մեծացնել տվյալ կառույցի ղեկավարի լիազորությունները, ինչպես նաեւ ստեղծագործական ոլորտում ապահովել սերնդափոխություն:

Որոշակի փոփոխություններ են նախատեսվում նաեւ պետական կառույցների ֆինանսավորման մոդելների սկզբունքներում», - նշել է Արա Խզմալյանը եւ հավելել, որ մատնանշած ուղղություններով բարեփոխումներն առաջնահերթություններ են:

Ինքնազբաղ (անկախ) արվեստագետների գործունեության խթանում

Նախարարի տեղակալի նշմամբ՝ ռազմավարության կարեւոր կետերից է ինքնազբաղ (անկախ) արվեստագետների գործունեության խթանումը: Նրա խոսքով՝ համավարակի շրջանում ակներեւ էր, որ ամենամասնապատասխան ստեղծագործական խավը պետական կառույցից դուրս գործող արվեստագետներն են, որոնց սոցիալական վիճակի՝ պետության հետ ֆինանսահարկային հարաբերությունների տրամաբանությունը որոշակի չէ: «Այս ուղղությամբ բա-



վականին լուրջ հետազոտություններ են արվել, մշակվել են մոդելներ՝ ինչպես անել, որ ինքնազբաղ ստեղծագործող մտնի հարկային դաշտ եւ տեսնի իր վճարած հարկերի ճանապարհը, տեսնի, թե ապագայում դա ինչպես պետք է դառնա սոցիալական կապիտալ իր համար: Նոր կարգավորումների, ինքնադրսերումն պայմանների ստեղծման, դրամաշնորհների եւ այլ գործիքակազմերի ներդրման, այդ թվում՝ նպատակային ֆինանսավորման եւ միջոցառումների միջոցով անհրաժեշտ է նպաստել ոլորտի ազատ եւ ինքնազբաղ ստեղծագործողների ճանաչելիության բարձրացմանը»:

Մշակույթի մեկենասության վարկանիշի ձեռավորում

Արա Խզմալյանն անդրադարձել է մշակութային ներդրումների եւ բարեգործության խթանման, մշակույթի մեկենասության վարկանիշի ձեռավորման հարցին: Նրա տեղեկացմամբ՝ մեկենասության մասին օրենք ունենալու հարցը տարբեր շրջանակներում բազմիցս է քննարկվել: «Այս դեպքում օրենքը թերեւս կունենա առավելապես քաղաքական ուղեծրի նշանակություն, որովհետեւ գործնական ազդեցությունը պետք է լինի հարակից օրենքներում, օրինակ՝ հարկային օրենսգրքում, եւ մարդն իր բարեգործության դիմաց կստանա որոշակի հարկային արտոնություններ: Սակայն իմ խորին համոզմամբ՝ հարկային արտոնությունը չի կարող ունենալ այն ազդեցությունը, ինչը կարող է ունենալ ստեղծատվական քաղաքականությունը մեկենասի շուրջ: Մեկենասը պետք է դառնա հանրային արժեք, որի շուրջ էլ պետք է իրականացնել ստեղծատվական քաղաքականություն: Այս համատեքստում մշակվել են քայլեր, որոնցից են «Մեկենաս տարեգրքի հրատարակումը, մեկենասության մրցանակի սահմանումը՝ դարձնելով այդ մարդկանց հանրորեն տեսանելի եւ ճանաչելի»:

Նյութատեխնիկական բազայի, գույքի եւ ենթակառուցվածքների բարելավում

«Երբ խոսում ենք ՊՈԱԿ-ների գործունեության արդյունավետության մասին, այն անհնար է պատկերացնել՝ առանց խոշոր գույքային եւ նյութատեխնիկական աջակցության, որոնցով այդ կազմակերպությունները երկար տարիներ չեն համարվել: Աննախադեպ ծավալների հատկացումներ են արվել վերջին երեք տարիների ընթացքում: Յուրաքանչյուր տարի ՊՈԱԿ-ներին տրվող գումարները գերազանցում են 1 միլիարդի շեմը: Գումարները տրվում են լուսաձայնային տեխնիկայի, մտատեղերի, տանիքների եւ այլ նորագույնների համար: 2022 թվականի

տարեվերջին Արամ Խաչատրյանի համերգասրահի միայն մտատեղերի արդիականացման համար հատկացվել է 220 միլիոն դրամ:

ՊՈԱԿ-ներում նյութատեխնիկական բազայի, գույքի եւ ենթակառուցվածքների արդիականացման, բարելավման նպատակով այս տարի եւս նախատեսվում են մեծ ծավալների հատկացումներ», - տեղեկացրել է Արա Խզմալյանը եւ հավելել, որ ինչպես փորձն է ցույց տալիս, որտեղ կա խոշոր կապիտալ հատկացում, այդ կազմակերպությունում գրանցվում է սեփական եկամուտների աճ, որովհետեւ դա ազդում է արդյունավետության վրա:

Մշակութային հասանելիություն եւ ներառականություն

Արա Խզմալյանի համոզմամբ՝ յուրաքանչյուր քաղաքակիրթ պետություն պետք է ապահովի մշակութային հասանելիություն բոլոր քաղաքացիների համար՝ անկախ բնակության վայրից, ֆիզիկական եւ մտավոր զարգացման առանձնահատկություններից:

«Արդեն իսկ իրականացվում են բազմաթիվ ծրագրեր, վերապատրաստման դասընթացներ, որոնց մասնակցել են ներառականության ապահովման հաստատությունների ներկայացուցիչները: Իրականացվում են «Կողք կողքի», «Ֆրեսկո» փառատոները, որոնց շրջանակում քարզացման տարբեր առանձնահատկություններ ունեցող երեխաներն ու պատանիները հանդես են գալիս անվանի երաժշտների հետ: Հրատարակվում են գրքեր, իրականացվում է «Խոսող կտավներ»՝ նախագիծը՝ տեսողության առանձնահատկություններ ունեցող երեխաների համար: Ծրագրերը բազմաթիվ են, եւ դրանք լինելու են շարունակական», - ասել է նախարարի տեղակալն ու ընդգծել՝ ներառականությունը եւս կարեւոր առաջնահերթություն է ռազմավարության մեջ:

Մշակույթի ապակենտրոնացում

Արա Խզմալյանն ընդգծել է, որ մշակույթի ապակենտրոնացումը ռազմավարության կարեւոր կետերից է: «Եթե նայենք միայն վիճակագրական տվյալներին, ապա կտեսնենք, թե նախորդ տարիներին որքան ծրագրեր եւ միջոցառումներ են իրականացվել համայնքներում: Մշակութային իրադարձությունները միայն մայրաքաղաքում պետք է չկենտրոնացվեն, որովհետեւ մշակույթը միայն ժամանց չէ: Այն ունի բարոյահոգեբանական հսկայական ազդեցություն, որի կարիքը մեծ է՝ հատկապես սահմանամերձ համայնքներում:

Դրամաշնորհների հատկացման ծրագրում, որպես պարտադիր պայման, ներկայացված է մշակութային նախագծի ամբողջական կամ մասնակի իրականացում մարզերում եւ սահմանամերձ համայնքներում: Երեւանի եւ մարզերի մշակութային տարբեր կառույցների միջեւ ստեղծվել են ստեղծագործական կապեր եւ սերտ համագործակցություն: Նույնիսկ առաջատար միջազգային փառատոներն ու ծրագրերն անցկացվում են նաեւ մարզերում»:

Շարունակությունը՝ էջ 4

Հանրային քննարկումներ

Ներկայացվել են բարեվարքության կանոնները

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունը հանրային քննարկման է ներկայացրել հանրակրթական ուսումնական հաստատությունների կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի անդամների եւ մանկավարժական աշխատողների բարեվարքության կանոնների նախագիծը:

Փաստաթղթով կարգավորվում են դպրոցների վարչական, մանկավարժական աշխատողների, ինչպես նաեւ ուղրտի շահառու հանդիսացող աշակերտների եւ ծնողների փոխհարաբերությունները՝ էթիկայի նորմերի շրջանակում: Նախագիծը հանրակրթության ոլորտում ուսումնական գործընթացի մասնակիցների գործունեությունը կարգավորող յուրահատուկ վարքագծերն է: Այն ուղղված է հարաբերությունների այն ոլորտը, որը չի կանոնակարգվում իրավական նորմերով, այլ ենթակա է զուտ բարոյական կարգավորման:

Փաստաթղթի ստեղծման համար հիմք է հանդիսացել ուղրտում առկա հիմնախնդիրների լուծման համատեքստում հանրակրթության նպատակաուղղվածության առավել արդյունավետ իրագործումը՝ անձի ուսուցման եւ դաստիարակության գործընթացը զուգակցելով էթիկայի նորմերի համընդհանուր ներդրմամբ: Ուսումնական հաստատություններում էթիկայի նորմերի ներդրումն ու կիրարկումը հիմք կհանդիսանան կրթության գործընթացի բոլոր մասնակիցների կողմից սեփական իրավունքների եւ պարտականությունների գիտակցման, ինչպես նաեւ ներքին կարգապահական կանոնների պատշաճ կատարման համար համար:

Իրենց վերապահված գործառնություններն իրականացնելիս խորհրդի անդամն է մանկավարժական աշխատողների գործունեությունը պետք է համահունչ լինի պետության կողմից երեխայի՝ որպես հասարակության լիիրավ քաղաքացու ձեւավորման առաջնահերթության սկզբունքներին:

Հասարակության մեջ մարդու՝ իբրեւ բարձրագույն արժեքի ձեւավորման եւ կայուն զարգացման ապահովման գրավակամը կրթության դերի բարձրացումն է, որը իրատեսական կդառնա, եթե՝

- անձը գիտակցի դրա անհրաժեշտությունը,
- բարձրանան դպրոցի եւ ուսուցչի դերն ու հեղինակությունը,
- անձի դաստիարակությունը բխի հասարակական բարոյական հատկանիշներից,
- անձի սոցիալականացման գործընթացի հիմք ընդունվի վարքականոնների յուրացումը՝ տվյալ հասարակությանը բնորոշ սոցիալական փորձով,
- անձը տիրապետի իր հասարակական դերին,
- հասարակական հարաբերությունների կարգավորման գործում կարեւորվի դաստիարակությունը՝ էթիկայի նորմերի յուրացման պարտադիր պայմանով:

Տեղեկատվական դաշտը լայն հնարավորություն է ընձեռում վարքականոնների մասին տարատեսակ ուսուցողական նյութեր ձեռք բերելու եւ կիրառելու համար, սակայն ցանկալի է համաման արդյունք ունենալու, միասնական նպատակաուղղվածություն սահմանելու համար անհրաժեշտ է ուսումնական հաստատություններն ապահովել համապատասխան ձեռնարկներով եւ մեթոդական ուղեցույցներով: Էթիկայի նորմերի սահմանումը չի հետապնդում դրանք խախտող անձանց նկատմամբ պատժամիջոցների կիրառման նպատակ, այլ, ընդհակառակը, դրանք իրագործելու խիստ անհրաժեշտության գիտակցում եւ ժամանակի արդյունավետ օգտագործմամբ հնարավորինս արագ դրանց կիրարկման հեռանկար:

Փաստաթուղթը մշակել են ԿԳՄՍ նախարարությունը, «Կրթություն եւ համերաշխություն» արհմիությունը եւ «Թրանսփերենսի ինթերնեյշնլ Հայաստան» հակակոռուպցիոն կենտրոնը:

Քաղաքացիները եւ շահառու խմբերը մինչեւ փետրվարի 11-ը կարող են նախագծի վերաբերյալ իրենց առաջարկություններն ու դիտողությունները ներկայացնել Իրավական ակտերի նախագծերի իրապարակման միասնական կայքում:

Հեղինակ՝ ԳՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Ազգային ինքնության եւ արժեքների հենքով

սկիզբը՝ էջ 2

Կրթամշակութային ծրագրեր

«Նախարարության լավագույն գաղափարներից է մշակութային եւ կրթական քաղաքականությունների համադրումը՝ կրթամշակութային ծրագրերը՝ «Մեկնարկ» տաղանդի զարգացման նպատակային ծրագիր, «Քո արվեստը դպրոցում», «Դաս Ա», «Քույր դպրոցներ», «Դասարան+Դասական», «Արվեստանոց», «Դպրոցականի ֆիլիարմոնիա», «Զարդագիր», «ԴասԱրվեստ» եւ այլն: Այս ծրագրերի շրջանակում երեխաները ստանում են մասնագիտական կողմնորոշման հնարավորություն, լավագույն արվեստագետները մուտք են գործում դպրոցներ, որի արդյունքում բարձրանում է մշակույթի եւ մշակութային գործիչի հանրային հեղինակությունը, ճանաչելիությունը, վարկանիշը: Եվ ամենակարեւորն է՝ այս ծրագրերի միջոցով պատրաստում ենք վաղվա հանդիսատեսին»,- նշել է Արա Խզմայանը:

Միջազգային համագործակցություն

Արա Խզմայանի համոզմամբ՝ երկրի ճանաչելիության առումով ամենարդյունավետ գործիքակազմը միջազգային ներկայությունն է: Հայ մշակույթի ներկայացումը միջազգային հեղինակավոր տարբեր հարթակներում, տարբեր ձեւաչափերով կխթանի երկրի ճանաչելիության բարձրացմանը:

Պատմական հուշարձաններ

Ալֆրեդ Քոչարյանը մատնանշել է ուղրտում նախատեսվող բարեփոխումներն ու խոսել դրանց նպատակներից: «Ռազմավարության գլխավոր նպատակն է մշակութային ժառանգության պահպանությունն ու փոխանցումը սերունդներին, եւ այդ հիմնաքարի շուրջ էլ կառուցվել է ռազմավարությունը: Հուշարձանների վերականգնմանը պետական բյուջեից հատկացվող միջոցները 2022 թ. Նախորդ երկու տարիների համեմատ ավելացել է շուրջ 30 %-ով՝ կազմելով շուրջ 400 մլն ՀՀ դրամ: 2023 թ. հատկացված է 660 մլն, որը նախատեսվում է հասցնել 1 մլրդ ՀՀ դրամի: 2027 թ. պետական բյուջեից բնագավառին հատկացումները նախատեսվում են հասցնել մինչեւ 2 մլրդ ՀՀ դրամի: Այս գումարների հիմնական մասը ծախսվում է գիտաանալիզային աշխատանքների եւ բուն վերականգնումների համար: 2023 թվականին նախատեսվում են իրականացնել 12 հուշարձանի վերականգնում»,- նշել է Ալֆրեդ Քոչարյանը եւ հավելել, որ վերականգնվող հուշարձանների թիվն այս տարի աննախադեպ է: Պատմական հուշարձանները վերաբերում են ձեւավորում երկրի նկատմամբ Նախարարի տեղակալի խոսքով՝ ուղրտի քաղաքականության մեջ ուշադրությունն ուղղված է պետականության խորհրդանիշ հանդիսացող հուշարձաններին՝ բերդերին եւ ամրոցներին: «Համոզված ենք, որ սա կրթության կարեւոր մի բաղադրիչ է, այսինքն անձը մանկուց պետք է ճանաչ-



պարհորդի Հայաստանով եւ տեսնի այն բերդերը, ամրոցները, խորհրդանիշները, որոնք պատմական նշանակություն ունեն երկրի եւ պետականության համար, ինչն էլ անձի մոտ վերաբերմունք է ձեւավորում իր երկրի նկատմամբ»: Անդրադառնալով պետություն-մասնավոր հատված համագործակցությանը՝ նախարարի տեղակալն ընդգծել է, որ այս համագործակցության շրջանակում շարունակական վերականգնման փուլում են գլխավորապես պաշտամունքային նշանակության ավելի քան 10 հուշարձաններ: Մինչեւ 2027 թ. դրանց թիվը նախատեսվում է կրկնապատկել:

Թանգարաններ

Բարեփոխումներ են նախատեսված թանգարանների ոլորտում Նախարարի տեղակալ Ալֆրեդ Քոչարյանը տեղեկացրել է նաեւ, որ հիմնական բարեփոխումները նախատեսված են թանգարանների ոլորտում: «Այս փոփոխությունները կապված են այն հանգամանքի հետ, որ կան թանգարաններ, որոնք չեն ունենում այնքան այցելու, որը կհամապատասխանի իրենց փաստացի ներուժի հետ: Այս խնդրի լուծման նպատակով նախատեսվում է ստեղծել պետական կառույց (հիմնադրամ), որը կաջակցի թանգարաններին՝ վերցնելով որոշ գործառնություններ իր վրա, տալով թանգարաններին ավելի շատ ազատություն, հնարավորություն ավելի շատ զբաղվելու գիտական գործունեությամբ»: Նոր մոդելով առաջարկվում է ստեղծել «Թանգարանների կառավարման հիմնադրամ», որը կիրականացնի թանգարանների կառավարման եւ առաջխաղացման, մասնավորապես կազմակերպատնտեսական, անձնակազմի կառավարման, ֆինանսական եւ հանրահռչակման գործառնությունները: Ընդ որում ծառայությունների զգալի մասը նախատեսվում է մրցութային ընթացակարգով արտապատվիրակել մասնավոր ընկերություններին: Նշվել է, որ կառավարման նոր մոդելը հնարավորություն կտա իրականացնելու թանգարանների կառավարչատնտեսական համակարգված կառավարում մեկ կենտրոնից, վարել ֆինանսական եւ անձնակազմի ներգրավման ճկուն քաղաքականություն՝ միաժամանակ նպատակով տնօրենների եւ մասնագիտական ներուժի գիտահետազոտական աշխատանքի արդյունավետ իրականացմանը եւ թանգարանների գի-

տակրթական գործունեության զարգացմանը: Էլեկտրոնային տոմսային համակարգի ներդրում Շարունակելով ներկայացնել թանգարանների ոլորտում նախատեսվող բարեփոխումները՝ Ալֆրեդ Քոչարյանը մատնանշել է էլեկտրոնային տոմսային միասնական համակարգի ներդրումը, որը, որպես պիլոտային ծրագիր, սկզբնական շրջանում կներդրվի ԿԳՄՍ նախարարության ենթակայության թանգարաններում: Այն հնարավորություն կտա ապահովելու թանգարանային այցելությունների համակարգված կազմակերպում, տոմսային տնտեսության եւ ֆինանսական հոսքերի կառավարման ժամանակակից գործիքակազմի ներդրում: «Այս ծրագիրը միտված է ոլորտում թափանցիկության ապահովմանը, ինչպես նաեւ ներառում է հարմարավետության բաղադրիչը: Թանգարանի այցելուները հնարավորություն կստանան ձեռք բերելու էլեկտրոնային տոմս, գնային ճկուն համակարգ՝ ստանալ զեղչ մի քանի թանգարանի տոմս ձեռք բերելու պարագայում: Այս համակարգի ներդրումը ժամանակի հրամայական է. մրցութային առաջին փուլն արդեն տեղի է ունեցել, երկրորդը կհայտարարվի առաջիկայում»,- տեղեկացրել է նախարարի տեղակալը:

Օրենսդրական խնդիրներ

Խոսելով ուղրտում առկա բացի մասին Ալֆրեդ Քոչարյանը մատնանշել է թանգարանների մասին օրենքի բացակայությունը, որն այս տարի կլրացվի: Այս համատեքստում Ալֆրեդ Քոչարյանը հիշեցրել է, որ 1998 թվականից ի վեր չէր արդիականացվել հուշարձաններին վերաբերող օրենքը: Այժմ ԱԺ-ն առաջին ընթերցմամբ ընդունել է «Պատմության եւ մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության եւ օգտագործման մասին» եւ «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին նախագծերի փաթեթը եւ շուտով այն կներկայացվի երկրորդ ընթերցման: Կապիտալ ծրագրերն աճել են Կապիտալ վերանորոգման ծախսերի մասով նախարարի տեղակալն արձանագրել է, որ արդեն իսկ շուրջ մեկ միլիարդ դրամ է ծախսվել Հայաստանի ազգային պատկերասրահի եւ Հայաստանի պատմության թանգարանի օդափոխման համակարգի արդիականացման համար: «Այս տարի կավարտվի պատկերասրահի բոլոր հարկերի վերանորոգման, վերելակների փոխման աշխատանքները: Կապիտալ նորոգման ծախսերը շարունակվելու են նաեւ այս տարի, կվերանորոգվի Թումանյանի թանգարանը»: Նախարարության ռազմավարական առաջնահերթություններից է նաեւ ոչ նյութական մշակութային ժառանգության ոլորտը. այս գործընթացներում կարեւորվում է ՀՀ համայնքների, ժառանգությունը կրող խմբերի, անհատների, հասարակական եւ մշակութային կազմակերպությունների ներգրավվածության ընդլայնումը: Արհեստներ սովորելու համար կտրվեն դրամաշնորհներ: «Այս ոլորտում կրթական ծրագրերի համար տրվում են դրամաշնորհներ, եւ նախապատվություն ստանում են այն նախագծերը, որոնց միջոցով մարդիկ հնարավորություն են ունենում սովորելու արհեստներ: Շահառուները ոչ միայն երիտասարդներն են, այլեւ տարեց մարդիկ: Նմանատիպ կրթական ծրագրեր իրականացնում են նաեւ մեր թանգարանները. շուրջ 40 հազար շահառու այս կրթական ծրագրերի միջոցով սովորում են տարբեր արհեստներ»,- նշել է նախարարի տեղակալը եւ հավելել, որ միեւնույն ժամանակ ոչ նյութական մշակութային ժառանգության ոլորտում տարվում են աշխատանքներ ՅՈՒՆԵՍԿՕ-ում հայտեր գրանցելու ուղղությամբ:



Հանրային քննարկումներ

Աշխարհի հետ

Ուսուցչի կողմից հավաքվող կրեդիտների չափանիշները եւ նվազագույն չափաքանակը

Հայ-վրացական մշակութային կապեր

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունը հանրային քննարկման է ներկայացրել հանրակրթական ուսումնական հաստատության ատեստավորման ենթակա ուսուցչի կողմից հավաքվող անհրաժեշտ կրեդիտների անվանացանկը, չափանիշները եւ նվազագույն չափաքանակը սահմանելու մասին ԿԳՄՍ նախարարի հրամանի նախագիծը:

Ուսուցչի վերապատրաստման կրեդիտը սահմանվում է իբրեւ մասնագիտական գործունեության ձեւի վերապատրաստման դասընթացն ավարտելու եւ դրա ելքային արդյունքները ձեռք բերելու համար պահանջվող ժամաքանակով արտահայտված ուսումնական բեռնվածության չափման պայմանական միավոր, որը տրվում է վերապատրաստման չափորոշիչով եւ ծրագրով սահմանված վերջնարդյունքների առնվազն 60 տոկոսը հաղթահարելուց հետո:

Ուսուցչի մասնագիտական գործունեության ձեւերին համապատասխան կրեդիտների անվանացանկը ներառում է՝

- առարկայի ինստիտուտի կրեդիտ,
- դասավանդման մեթոդաւանկավարժական (պրակտիկ) կարողությունների կրեդիտ,

- սովորողին ցուցաբերվող աջակցության կրեդիտ,
- ինքնագործակցման եւ մասնակավարժական համայնքի հզորացման կրեդիտ:

Մասնագիտական գործունեության յուրաքանչյուր ձեւի համար սահմանվում են միավորներ: Ձարգացման ոլորտի մասնագիտական գործունեության յուրաքանչյուր ձեւի ուսումնասիրության արդյունքում ուսուցչներին տրվում է 0-100 միավոր: Աշխատանքը համարվում է հանձնաժամով 50 միավոր հավաքելու դեպքում:

Ձարգացման ոլորտի ուսումնասիրության արդյունքում 60 եւ ավելի միավոր ստացած ուսուցչին տրվում է 1 կրեդիտ: Ուսուցիչը համարվում է ատեստավորված, եթե զարգացման ոլորտներից յուրաքանչյուրի համար ստացել է 1 կրեդիտ: Կրեդիտով սահմանվող ուսումնական բեռնվածությունը ներառում է ուսուցչի լսարանային եւ ինքնուրույն իրականացվող բոլոր ուսումնական աշխատանքները՝ մասնակցությունը դասախոսություններին եւ գործնական աշխատանքներին:

Ուսուցչի վերապատրաստման ընթացքում ուսումնասիրած դասընթացների համար ստացած գնահատականները գրանցվում են ակադեմիական տեղեկագրում, որն արտացոլում է ուսուցչի կա-

տարած ուսումնական բեռնվածության ծավալը եւ կրթական ձեռքբերումների որակը:

Տեղեկագրում գրանցված կրեդիտներն ուժի մեջ են անկախ վերապատրաստման ծրագրի կամ վերապատրաստող կազմակերպության կարգավիճակի կամ կազմակերպարարական ձեւի հետագա հնարավոր փոփոխություններից:

Հնգամյա շրջափուլի ընթացքում տվյալ տարվա՝ բացառությամբ շրջափուլի 5-րդ տարվա, վերապատրաստումներից անհրաժեշտ քանակությամբ կրեդիտներ չկուտակելու կամ ցածր միավորներով հանձնած մասնագիտական գործունեության ձեւի դասընթացին (իր միջոցների հաշվին) կրկին մասնակցելու եւ դրանք լրացնելու համար կամ անհաղթահարելի ուժի պայմաններում ուսուցչին տրվում է հնարավորություն՝ լրացնել դրանք հաջորդ տարի: Հաջորդ տարի անհրաժեշտ քանակությամբ կրեդիտներ չկուտակած ուսուցիչը համարվում է չատեստավորված:

Քաղաքացիները եւ շահառու խմբերը մինչեւ փետրվարի 11-ը կարող են նախագծի վերաբերյալ իրենց առաջարկություններն ու դիտողությունները ներկայացնել Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում:



Նիմո Անանիաշվիլին ծանոթացել է թատրոնի եւ բալետային խմբի գործունեությանը, քննարկել համատեղ նախաձեռնությունների հեռանկարները:

Այնուհետեւ Նիմո Անանիաշվիլին ընդունել է ՀՀ ԿԳՄՍ նախարար տեղակալ Արա Խզմալյանը: Հանդիպման ընթացքում կողմերը քննարկել են մասնագիտական փոխանակումների եւ համատեղ նախագծերի հնարավոր տարբերակները: Կողմերը նաեւ անդրադարձել են Արամ Խաչատրյանի ծննդյան 120-ամյակի շրջանակում համագործակցության ձեւաչափերին:

Երկուստեք պայմանավորվածություն է ձեռք բերվել խորացնելու հայ-վրացական մշակութային հարաբերություններն ինչպես պրոֆեսիոնալ գործունեության, այնպես էլ կրթական ոլորտներում: Մասնավորապես անդրադարձ է կատարվել Վրաստանի օպերայի եւ բալետի թատրոնի ու Երեւանի պարավեստի պետական թուլեջի միջեւ մասնագիտական կապերի խորացմանը:

Սովորողի ուսումնառության արդյունքների գնահատման կարգի նախագիծը

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունը հանրային քննարկման է ներկայացրել պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների սովորողի ուսումնառության արդյունքների գնահատման կարգի նախագիծը: Համաձայն նախագծի՝ գնահատման կարգի ներդրումը նախատեսվում է իրականացնել փուլային եղանակով՝ ըստ հանրակրթության պետական նոր չափորոշիչի ներդրման ճանապարհային քարտեզի:

Գնահատումը նպատակ ունի որոշելու սովորողի կարողունակությունների գարգացման աստիճանը՝ ըստ ուսումնական առարկաների չափորոշիչներով եւ ծրագրերով սահմանված վերջնարդյունքներին համապատասխան ձեռք բերած գիտելիքների, հմտությունների, դիրքորոշումների ու արժեքների ձեւավորման աստիճանի: Գնահատման գործընթացի հիմքում ընկած են հավաստիության, հուսալիության, օբյեկտիվության, մատչելիության, արդարության եւ թափանցիկության սկզբունքները: Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողի ուսումնառության արդյունքների գնահատումն իրականացվում է նույն սկզբունքներով՝ ապահովելով սովորողի անհատական ուսուցման պլանով նախատեսված խելամիտ հարմարեցումները, մատչելի ձեւաչափերը, անհատական օժանդակ սարքավորումներն ու միջոցները:

Ըստ նպատակի՝ կիրառվում է սովորողի ուսումնառության արդյունքների գնահատման երեք տեսակ.

- 1) հայտորոշիչ գնահատում,
- 2) ձեւավորող գնահատում,

3) ամփոփիչ գնահատում (միավորային եւ բնութագրող):

Հաստատությունները կարող են կիրառել գնահատման այլ համակարգ, որը համապատասխանեցվում է 10 միավորային սանդղակին: 10 միավորային սանդղակում որեւէ թիվ չի հանդիսանում անբավարար գնահատական, եւ յուրաքանչյուր ճիշտ նկարագրում է աշակերտի հաջողության որեւէ մակարդակ: Քանակական գնահատումը ցույց է տալիս աշակերտի ու ուսումնական հաջողությունները. սկսվում է 1 միավորից եւ չունի անբավարար սանդղակ:

Ձեւավորող (ուսուցանող) գնահատման մեթոդներն ու ձեւաչափն ընտրում է ուսուցիչը: Գնահատումն իրականացվում է ուսումնական տարվա ընթացքում (ընթացիկ), կիսամյակի եւ ուսումնական տարվա ավարտին (ամփոփիչ), հանրակրթական ծրագրի յուրաքանչյուր աստիճանի ավարտին (ամփոփիչ ատեստավորում):

1-4-րդ դասարաններում եւ 5-րդ դասարանի առաջին կիսամյակում միավորային գնահատում չի իրականացվում:

Ընթացիկ գնահատումը կատարվում է բնութագրման միջոցով, իսկ որպես տարեկան ամփոփիչ գնահատական կազմվում է յուրաքանչյուր սովորողի ուսումնական առաջադիմության բնութագրող՝ համաձայն կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգի:

Միավորային գնահատումը կիրառվում է՝ սկսած 5-րդ դասարանի երկրորդ կիսամյակից:

7-12-րդ դասարաններում յուրաքանչ-

յուր աշակերտ տարեկան իրականացնում է առնվազն մեկ ուսումնական նախագիծ՝ իր ընտրած առարկայից կամ առարկաներից: Այլընտրանքային ծրագրեր իրականացնելու դեպքում կարող է գործել գնահատման այլ կարգ:

Սովորողների ընթացիկ գնահատականների հիման վրա կիսամյակային, իսկ կիսամյակային գնահատականների հիման վրա՝ տարեկան գնահատականները ձեւավորվում են կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգով:

Հանրակրթական ծրագրի յուրաքանչյուր աստիճանի ավարտին իրականացվում է պետական ամփոփիչ ատեստավորում՝ կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգով: Պետական ամփոփիչ ատեստավորումն իրականացվում է ուսումնական առարկաների տարեկան գնահատականների, ավարտական քննությունների կամ ստուգաթղթերի եւ բնութագրման արդյունքներով:

4-րդ դասարանում իրականացվում է ամփոփիչ գնահատում՝ բնութագրման միջոցով, 9-րդ դասարանում՝ ավարտական քննություններ, 12-րդ դասարանում՝ պետական ավարտական քննություններ: Չափորոշչային պահանջների կատարումը ստուգելու նպատակով Կրթության պետական կառավարման լիազորված մարմինն իր կողմից սահմանված պարբերականությամբ դարձնում է պետական կազմակերպիչ արտաքին գնահատում:

Հիմնական եւ միջնակարգ դպրոցի ավարտական քննությունների ժամանակ կրթության կառավարման լիազորված

մարմնի որոշմամբ կարող են կիրառվել գնահատման այլ համակարգեր: Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողի գիտելիքների քանակական (միավորային) ընթացիկ գնահատումն ու ամփոփիչ ատեստավորումը կարող է իրականացվել ըստ անհատական ուսուցման պլանի՝ 10 միավորային սանդղակով:

Քաղաքացիները եւ շահառու խմբերը մինչեւ փետրվարի 11-ը կարող են նախագծի վերաբերյալ իրենց առաջարկություններն ու դիտողությունները ներկայացնել Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում:

Հեղինակ՝ ՅՈՒՐԱՆՆԻՍՅԱՆ



Գրախոսություն

Հանրագիտարան Չարենցի կյանքի ու գործի

Լույս է տեսել բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Դավիթ Գասպարյանի «Եղիշե Չարենցի կյանքը եւ ժամանակը» («Տիգրան Մեծ», 2022, 804 էջ + 16 էջ լուսանկարների ներդիր) մեծադիր ու շքեղ մենագրությունը: Այն լավագույն նվեր է մեծ գրողի ծննդյան 125-ամյակին, որը լրացավ անցյալ տարի:

Գիրքը նախատեսված է որպես հանրագիտարան, որովհետեւ այստեղ ամբողջական Չարենցի է՝ կյանքի ու գործունեության ժամանակագրական հաջորդականությամբ: Մենագրության նոր ձեւ է՝ ժամանակագրության սկզբունքով՝ տարեթիվ, ամիս, օր, տեղ, իրադարձություն եւ սկզբնաղբյուր: Եվ այս ամենը՝ անհրաժեշտ վերլուծությամբ հագեցած մենագրական շարադրանք: Ժամանակագրությունը նպաստում է նյութի բնականոն հաջորդականությանը: Իշխում է ժամանակագրության կարգապահ վերահսկողությունը եւ այնպես չէ, որ հեղինակը տարվի նյութի ծավալումներով, գայթակղիչ զուգահեռներով, մտքի թռիչքներով եւ հեռանա ժամանակից: Ամեն ինչ իր տեղում սկզբունքով տվյալ օրվա կամ օրերի շրջանի մեջ ավելի է ընդգծում կատարվածի կարևորությունը, թեկուզ լինի փոքր մանրամասն:

Որպես սկզբնաղբյուր ծառայել է այն ամենը, ինչ ընդհանրապես վերաբերում է Չարենցի ու նրա կյանքի ժամանակին նրա ամբողջ ստեղծագործությունը, նրա մասին հուշագրությունը, մամուլը, արխիվները, նրան նվիրված գրքերն ու ամեն տեսակի հրատարակումներ: Միայն Չարենցի չէ, այլև պատմական իրադարձությունների շրջան է, գրական, քաղաքական, կուսակցական գործիչներն են, բանաստեղծի կյանքում եղած կանայք ու հրապուրանքները:

Չարենցով հետաքրքրվող յուրաքանչյուր ոք այս գրքում կգտնի ամեն ինչ: Թվեր ու փաստեր են, բայց ոչ չոր ու ցամաք: Դրանք սոսկ գրքի ճարտարապետական կառուցիչ երկաթյա հեծաններն են, որովհետեւ փաստը հիմնավորվում է անհրաժեշտ մեջբերումներով, ուղղորդող վերլուծությամբ եւ այսպես դրվագ առ դրվագ կերտում է մեծ գրողի ամբողջական դիմանկարը:

Չարենցը բարդ անցումների բանաստեղծ է, եւ բոլոր հետազոտողները չէ, որ հավասար հիացմունքով են նայում նրա ստեղծագործության տարբեր փուլերին: Այս տեսակետից առանձնահատուկ են հատկապես 1922-1924 թվականները, որոնք համարվում են Չարենցի գործունեության ծախ որոնումների շրջանը: Կարգալ է պետք, թե ինչ մանրակրկիտ հետևողականությամբ է Գասպարյանը ներկայացնում «Երեքի» դեկլարացիայից (1922, հունիս) մինչև «Standard» (1924, մայիս) ընկած ժամանակահատվածը, Չարենցի կողքին կանգնած եւ նրա շուրջ համախմբված մարդկանց, Չարենցի հողվածներն ու ելույթները, շեփոհանդեսներն ու գրական բյուլետենները, քննարկումներն ու ծայր առած գրապայքարը, մտավոր կյանքում կատարվող տեղաշարժերը, Երեւանի մշակութային արթնացումը: Մտքի թափանցող ուժ է պետք, որպեսզի Չարենցի այս տարիների գործունեության մեջ անմիջական եւ համոզիչ կապեր հայտնաբերվի այդ օրերին քննադատության թիրախ դարձած նրա ուսուցչի՝ Վահան Տերյանի «Չայ գրականության գալիք օրը» (1914) նորոգչական մեծ թափ ունեցող գեղուցման հետ: Այսօր անցյալի վերանայման իր այս կարճ շրջանի ծրագրերում է Չարենցը որքան Տերյանի դեմ էր, նույնքան էլ նոր պայմաններում շարունակում էր նրա սկսած, բայց անավարտ մնացած գործը:

Հանրապետության ժողովրդական կոմիսարների խորհուրդի նախագահ Ալեքսանդր Մյասնիկյանը՝ Տերյանի ընկերն ու

բարեկամը, Չարենցով հիացած գրական քննադատը այս իրադրության մեջ ամեն ինչ արեց ավելի ընդլայնելու նրա մտահորիզոնը եւ Չարենցին ուղարկեց արտասահման: Ամիսներ շարունակ շփվելով մարդկության ստեղծած համաշխարհային բարձր մշակույթի հետ՝ Չարենցը վերադարձավ էլ ավելի հարստացած եւ նախածեղեն «Նոյեմբեր» (1925) գրական խմբակցությունը:


Չարենցը բանաստեղծ էր, մարդ էր ու քաղաքացի եւ ամեն ինչ անում էր ամենացորդ ու կատարյալ նվիրումով: Այս ճանապարհին քիչ չեն եղել սայթաքումները, իսկ հակասականությունները:

Ահա, ամբողջապես ճանաչելով իր հեղինակին Գասպարյանն ամենեւին հակված չէ սրբագործելու նրան, ուստի՝ այստեղ ոչ միայն համարեղ բանաստեղծն է, այլև երկրային մարդը, ով հանուն իր խոսքի արժանապատվության կարող էր նաեւ դիմել ծայրահեղ քայլի՝ կրակել համակերպին արժանացած, բայց իրեն մերժած աղջկա վրա, բայց այնպես կրակել, որ ընդամենը մի թեթեւ քերծվածք առաջացնի, որ հետագայում այդ կինը պարծենա Չարենցի կրակոցով եւ հպարտությամբ ցույց տա ջահել օրերից որպես հիշատակ մնացած այդ սպին:

Հանճարեղ բանաստեղծ է երկրային մարդ՝ սա Չարենցի կերպարի բացահայտման իրական բանալին է թե՛ ստեղծագործելիս ու ժողովածուները հրատարակելիս, թե՛ կամավոր հայրենիքի համար զինվորագրվելիս (1915), թե՛ գրական գործը կազմակերպելիս («Երեքը», «Նոյեմբեր»), թե՛ «Գիրք ճանապարհի»-ի արգելման օրերին (1933-1934), թե՛ Հայպետհրատում զբաղեցրած աշխատանքից հեռացվելիս (1935), թե՛ քաղաքական հավածանքների տարիներին (1935-1937) եւ թե՛ բանտային կյանքի վերջին օրերին...

Ընդ որում՝ իր հեղինակի կերպարը կերտելու եւ ներկայացնելու գործում շատ կարեւոր է Դավիթ Գասպարյանի գրականագիտական մտածողության ձեւն ու ոճը: Այնպես, ինչպես յուրաքանչյուր նկարիչ իր բնորդի դիմանկարը յուրովի է պատկերում գույներ, գծեր, հայացք, հավաստիություն, լույս եւ ստվեր, ճիշտ այդպես էլ այստեղ է: Չարենցի մասին շատերն են գրել, բայց շատերի մեջ յուրաքանչյուր ոք կճանաչի Գասպարյանի Չարենցին: Գրում է պարզ, հստակ, առարկայական տեսանկյունից, առանց ավելորդ հավելումների, ավելորդ բառաբարդումների ու կեղծ գիտական եզրույթաբանության: Նրա գրի մեջ կա գեղարվեստի շունչ, որը երբեք չի հեռանում գրականագիտության պահանջներից, որովհետեւ հագեցած է փաստով եւ առաջնորդվում է ասելիքի տրամաբանական զարգացումով: Գրում է ոչ թե իրեն ցույց տալու կամ խելք բանցնելու համար, այլ միայն եւ միայն նյութը ամբողջապես եւ նորովի բացահայտելու նկատառումով: Նորովի ընդգծում են, որովհետեւ առանց մի նոր բան ասելու նախապայմանի՝ նա չի գրի: Ավելանում է գրականագիտական մտքի փայլը, ընտիր հայերենը, պատասխանատվությունը՝ մի կողմից գրականության պատմության, մյուս կողմից ընթերցողի առաջ, եւ արդյունքը կատարյալ է: Այդ իսկ պատճառով, ի տարբերություն չկարողացվող գրականագիտության, Գասպարյանի գրքերը կարողացվում են հաճույքով: Այս տեսակետից փայլուն օրինակ է եւ սույն աշխատությունը: Այսպիսի ամբողջական եւ նույնականության աստիճանի ինքը իրեն մնան Չարենցի գրական դիմանկար եւ դեռ չեն հանդիպել այլոց գրքերում: Ահա այստեղ է Գասպարյանի գրականագիտական առանձնահատկությունը, ինչի համար, առանց վարանելու, ասում են կեցցե՛ս, Դավիթ:

Շարունակեմ նորի գիծը: Այս գրքում նու



րությունն սկսվում է Չարենցի տոհմաբանության ճշտումից՝ ըստ «Չափաբերական մատյան»-ի, շարունակվում է յուրաքանչյուր ամիսով՝ ասենք «Գիրք ճանապարհի»-ի տպագրության պատմությունը եւ ավարտվում Չարենցի դեմ ուղղված քաղաքական հավածանքների առատ փաստագրությամբ: Նորություններն անպակաս են նաեւ հայտնի շատ գործերի նորովի մեկնաբանություններով, որ նշանակում է նա ճշգրիտ է բացահայտել «Սոնա», «Ամբոխները խեղազարված», «Չարենց - նամե», «Երկիր Նայիրի», «Լեւոնն ու Ալին» եւ շատ այլ գործերի չարենցյան գաղտնագրերը: Այդ ամենը փոքր գրախոսության մեջ ներկայացնելու բան չէ, պետք է միայն կարդալ գիրքը:

Սկսվում է Չարենցի ծնունդով, բայց չի ավարտվում նրա մահով, մահվան տեղեկանքով ու դիախեռման արձանագրությամբ: Իսկ ի՞նչ եղավ հետո, որտե՞ղ հանգիստ առավ Չարենցի դին, ինչպե՞ս դասավորվեց կնոջ՝ արտոնական Իգարեյայի կյանքը, Իգարեյան ի՞նչ նամակներ գրեց արտոնավայրերից, ո՞ւմ խնամքին մնացին դուստրերը, ի՞նչ եղան գրական ընկերներն ու բարեկամները, ինչպե՞ս իրենց դրսեւորեցին գրական հակառակորդներն ու թշնամիները, ո՞ւմ ձեռքը անցան ձեռագրերը, ի՞նչ եղան դրանց հետ, ե՞րբ եւ ինչպե՞ս եղավ արդարացումը, ովքե՞ր էին արդարացնողներ եւ այդ ինչպե՞ս եղավ, որ 1937 թվականի մեղադրողները 1955-ին դարձան արդարացնողներ... Այս հարցերի պատասխանները գրքի վերջին էջերում են՝ «1938 եւ հետագա թվականներ», «Արդարացում», «Մարդը», «Իգարեյա Չարենց» վերնագրերի ներքո: Գիրքը ինչպես ունի «Սուտք»-ի խոսք, այնպես էլ ունի վերջաբան՝ «Անհատականություն եւ ստեղծագործական ազատություն»: Այնպես որ, ամեն ինչ արված է անթերի ու վերջնական եւ ընթերցումն ավարտելուց հետո ոչ մի հարցական չի մնում:

Դեպի այս գիրքը Դավիթ Գասպարյանը եկել է իր ամբողջ հիսունամյա ստեղծագործական վաստակով՝ մենագրություններ, Չարենցի անտիպների եւ նրան նվիրված հուշերի հրատարակություններ: Նրա աշխատությունների ցանկը մատենագիտական մի մեծ ցուցակ է: Եվ այդ ամենը նվիրված գործունեության արդյունք է՝ առանց ժամանակի անգամ աննշան վատնումի: Նա, իրոք, գիտի ժամանակի գինը, երբեք այն չի վատնի եւ ունի պատասխանատվություն պատմության հանդեպ:

Աչքիս առաջ է, թե ինչպես օրերով դուրս չէր գալիս արխիվից եւ թուղթն ու գրիչն առած դուրս գրում պիտանի փաստերը: Դա ծանր ու հոգեմաշ աշխատանք է, որ թղթերի հարյուրավոր, հազարավոր էջեր թեր

թելուց հետո հետազոտողին վարձատրում է գտած անհրաժեշտ մի փաստով կամ տեղեկությամբ: Եվ իզուր չէ, որ մասնագիտական շրջանակում Դավիթ Գասպարյանի հասցեին օգտագործում են միանգամայն ճիշտ ու տեղին «օրենքով գրականագետ» արտահայտությունը, որ լսել եմ շատերից, որովհետեւ նա հետամուտ է ոչ թե ճիշտ, այլ ճշգրիտ գրականագիտության եւ այս ճանապարհին անցել է առանց շեղումների հարկ եղած դեպքում երբեմն մտնելով անգամ սուր բանավեճերի մեջ: Կարելիորդ սկզբունքն է եւ անցած ճանապարհի տրամաբանությունը: Իսկ նա այս հարցում զիջումներ չունի, որովհետեւ թե՛ որպես գրականության պատմաբան, թե՛ որպես գրական քննադատ եղել է միմիայն գրական բարձր արժեքների պաշտպան ու պահապան:

Իսկ բարձր արժեքներից բարձրագույնը Չարենցն է: Հասպ մի պահ պատկերացրեք թե չկան Գասպարյանի չարենցագիտական աշխատությունները՝ «Եղիշե Չարենցը եւ 1920-ական թվականների սովետահայ պոեզիան» (1983), հատկապես անկախության տարիներին կյանքի կոչված «Ողբերգական Չարենցը» (1990), «Փակ դռների գաղտնիքը» (1994), «Եղիշե Չարենց: Հայոց բանաստեղծության մայրաքաղաքը» (1996), նրա աշխատասիրությամբ լույս տեսած Չարենցի անտիպների երկու ժողովածուները՝ «Նորահայտ էջեր» (1996), «Գիրք մնացորդաց» (2012, 2017), նրան նվիրված հուշերի գրքերը՝ «Չարենցի հետ» (1997, 2008), նոր միայն պարզ կղառնա, թե ինչ մեծ բան կպակասի չարենցագիտությանը: Բայց, այդ ամենը կա եւ մեր գրականագիտության հարստությունն է:

Ընդ որում, ինչպես նաեւ այս մենագրությունն է վկայում, Գասպարյանը շատ հարգալից է չարենցագիտության ճանապարհը հարթած բոլոր հեղինակությունների հանդեպ: Հենց միայն այս գրքի վերջում գետնեղված «Օգտագործված եւ հղված գրականության» ցանկը 13 էջ է, յուրաքանչյուր էջում շուրջ 48-49 մատենագիտական սկզբնաղբյուր: Ամեն ոք իր վաստակով սա է գիտության բնականոն զարգացման տրամաբանությունը եւ, ըստ Գասպարյանի, դեռեւս շատ գործ կա անելու չարենցագիտության ճանապարհին: Ահա այդ տեսլականով նա աշխատանքային խմբի հետ մեկտեղ սկսել է Չարենցի «Ամբողջական երկեր»-ի հրատարակության գործը 13 հատորով: Նրա հավաստիացումով առաջին հատորը գրեթե պատրաստ է եւ շուտով լույս կտեսնի:

Այս գրքում (էջ 788) Գասպարյանն անում է մի իմաստուն առաջարկ՝ 1937-1954 թթ. թաղված ձեռագրերի մանրույթը, որ առանձին ծրարով պահվում է ԳԼՁ Չարենցի ֆոնդում, հանդիսավոր պայմաններում Կոմիտասի պանթեոնում հողին հանձնել՝ որպես Չարենցի աճյուն, եւ ճանաչել նրա գերեզման: Այո՛, Չարենցի աճյունը նրա քայքայված ձեռագրերն են: Հանձնարել գաղափար, մնում է միայն իրականացնել, այսինքն՝ աստղին լսող է պետք:

Սույն գիրքը Դավիթ Գասպարյանի նախատեսած չարենցագիտության սոսկ առաջին հատորն է: Նախապատրաստվում են երկրորդ եւ երրորդ հատորները: Այստեղ Չարենցի կյանքն է ու ժամանակը, երկրորդ հատորը նվիրվելու է ստեղծագործության բովանդակային վերլուծությանը՝ ամեն տեսակի կապերով, զուգահեռներով ու առնչություններով, երրորդը՝ արվեստի գաղտնիքների բացահայտմանը: Մխրալի աշխատանքային ծրագիր է, ուստի՝ մաղթենք այդ ամենն իրականացնելու ուժ եւ կորով եւ մեր կողմից ավելորդ խոչընդոտներ չստեղծենք նրա ճանապարհին:

Ամատունի ԿԻՐԱԲՅԱՆ
պատմական գիտությունների
դոկտոր



Մասնագիտական կրթությունն եւ ուսուցում

Շարունակվում է դուալ համակարգի ներդրումը համակարգում

Շարունակելով մասնագիտական կրթության եւ ուսուցման ոլորտի վերաբերյալ հարցազրույցների շարքը՝ ստորեւ ներկայացնում ենք Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (GIZ) «Մասնավոր հատվածի զարգացումն եւ մասնագիտական կրթությունն եւ ուսուցումը Հարավային Կովկասում» ծրագրի փորձագետ Յուլիա Ստակյանի խոսքը:

- Հարգելի՛ տիկին Ստակյան, Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության GIZ-ի կողմից Հայաստանի մասնագիտական կրթության եւ ուսուցման ոլորտում դեռեւս տարիներ առաջ սկսվել է դուալ ՄԿՈՒ ծրագրերի փորձարկումը: Խնդրում են պատմե՞ք՝ ինչ է եւ թաղում այդ համակարգը:

- Դուալ ՄԿՈՒ համակարգը եւ-թաղում է, որ ուսումնառության գործընթացը զուգահեռաբար իրականացվում է երկու (duo լատիներենում նշանակում է երկու) վայրում՝ ՄԿՈՒ հաստատությունում (քոլեջ, ուսումնարան եւ այլն) ու մասնավոր ընկերությունում՝ ամբողջ ուսումնառության ընթացքում: Ուսումնառության գործընթացն ավարտվում է ուսանողների իրավասությունների անկախ գնահատմամբ ոլորտային ներկայացուցիչների կողմից: Ուսանողն ուսումնառության ընթացքում համարվում է աշխատող, որի հետ կնքվում է աշխատանքային պայմանագիր: Երիտասարդներին ներկայումս պահանջարկ վայելող հմտություններով ապահովելը կարեւոր նշանակություն ունի արժանավայել աշխատանք գտնելու ճանապարհին: Դուալ ՄԿՈՒ-ն աշխատանքի վրա հիմնված ուսուցման մի մոդել է, որն ապահովում է պահանջվող մասնագիտական իրավասությունների ձեւավորումը գործնականում եւ խթանում է շրջանավարտների սահուն անցումն աշխատաշուկա, ինչպես նաեւ նրանց կայուն մասնագիտական զարգացումը: Այդուհանդերձ, շատ երկրներում մասնավոր ընկերություններին բավականին բարդ է բերել համագործակցության պետական ՄԿՈՒ համակարգի հետ՝ հնարավորություններ ստեղծելով ու ներդրումներ կատարելով նրանց հմտությունների զարգացման համար: COVID-19 համաճարակի հետեւանցով առաջացած տնտեսական ճգնաժամն էլ ավելի է դժվարացրել դուալ ՄԿՈՒ գործընթացում ներգրավված ընկերություններին պահելու եւ նոր ընկերություններ ներգրավելու գործընթացը:

- Ինչպե՞ս է դուալ կրթական ծրագիրը ներդրվել Հայաստանի ՄԿՈՒ հաստատություններում, ներկայացրե՞ք, խնդրում են, մանրամասնելով:

- Հայաստանում դուալ ՄԿՈՒ համակարգի ներդրումն իրականացվել է «Մասնավոր հատվածի զարգացումն եւ մասնագիտական կրթությունն եւ ուսուցումը Հարավային Կովկասում» (ՄՀՁ ՄԿՈՒ) ծրագրի շրջանակում Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության GIZ-ի կողմից՝ ԳԴՀ տնտեսական համագործակցության եւ զարգացման նախարարության (BMZ) պատվիրակմամբ: Հայաստանում դուալ ՄԿՈՒ

համակարգի ներդրման համար հիմք է հանդիսացել գերմանական մոդելը՝ միաժամանակ հաշվի առնելով ՄԿՈՒ ոլորտի տեղական զարգացումներն ու մասնավոր հատվածի կառուցվածքը: Արդյունքում ստացված մեթոդաբանությունը ենթադրում է պետական եւ մասնավոր հատվածների միջեւ համագործակցային շրջանակի ստեղծում, ընտրված ոլորտներում հմտությունների վերլուծությունն եւ ՄԿՈՒ ծրագրի մշակման համար անհրաժեշտ կարիքների բացահայտում: Յուրաքանչյուր գործողության իրականացման համար ընտրված է համապատասխան գործիքակազմ: Բացի այդ՝ մեթոդաբանությունը տարածել նաեւ այլ նախագծերի կողմից մշակվող կրթական ծրագրերում:

- Իսկ ո՞ր ոլորտներում է ներդրվել դուալ կրթական ծրագիրը:

- ՄՀՁ ՄԿՈՒ-ն, հիմք ընդունելով նախապատրաստական քայլերն ու գնահատումները, ԿԳՄՍՆ-ի հետ համատեղ գործարկել է 15 երկարաժամկետ դուալ դասընթաց 12 հաստատություններում: Դուալ ՄԿՈՒ համակարգի փորձնական ներդրման աջակցության ծրագրերն իրականացվել են հետեւյալ ոլորտներում՝ զբոսաշրջություն (Երեւանի պետական հումանիտար, Երեւանի հայ-հունական, Երեւանի տարածաշրջանային թիվ 2, Շիրակի, Տավուշի, Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջներ, Երեւանի N 6 եւ Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարաններ), գինեգործություն (Վայոց ձորի տարածաշրջանային պետական քոլեջ, ՀԱՄԻ Երեւանի մասնաճյուղի միջին մասնագիտական կրթական ծրագիր), ճարտարագիտություն (Երեւանի թիվ 6 արհեստագործական ուսումնարան, Լոռու եւ Տավուշի տարածաշրջանային պետական քոլեջներ) եւ տեղեկատվական տեխնոլոգիաներ (Շիրակի տարածաշրջանային պետական քոլեջ): 2022թ-ին մեկնարկել ենք եւս երկու ծրագիր՝ լոգիստիկա եւ տրանսպորտ, ռոբոտաշինություն: Համապատասխանաբար լոգիստիկան փորձարկվում է Երեւանի պետական հայ-հունական քոլեջում, իսկ ռոբոտաշինությունը՝ Լոռու տարածաշրջանային պետական քոլեջում:

Երկարաժամկետ ծրագրերից բացի՝ ՄՀՁ ՄԿՈՒ-ն աջակցել է չորս քոլեջներում երեք դուալ կարճաժամկետ դասընթացների փորձնական ներդրմանը՝ բավարարելով մասնավոր հատվածի ընկերությունների կարիքները:



Այս կարճաժամկետ դասընթացները (4-5 ամիս տեւողությամբ) հիմնականում միտված են նոր մասնագիտությունների ստեղծմանը: Կարճաժամկետ ծրագրերը կարեւոր են ամբողջ կյանքի ընթացքում շարունակական ուսումնառության տեսանկյունից, քանի որ թույլ են տալիս շատ արագ արձագանքել մասնավոր ընկերություններում որոշակի թափուր աշխատատեղերի առաջացմանն ու դրանց պահանջներին: Կարճաժամկետ վերապատրաստման դասընթացների փորձնական ներդրման արդյունքները կընդլայնեն իրենց աշխարհագրությունը: Դրանք հետագայում կամփոփվեն եւ կայուն կամրապնդվեն համակարգում՝ աջակցելով նորմատիվ իրավական բազայի կատարելագործմանը:

- Իսկ մասնագիտությունների ընտրության համար ի՞նչ սկզբունքներ են կիրառվել:

- Մասնագիտությունների ընտրությունը պայմանավորված է եղել պետության հռչակած ռազմավարական զարգացման ուղղություններով, սակայն յուրաքանչյուր դուալ ՄԿՈՒ ծրագրի համար մենք ուսումնասիրել ենք նաեւ մարզերի զարգացման հնարավորությունները, ուսումնական հաստատությունների ռեսուրսները եւ տվյալ ոլորտում մասնավոր հատվածի կազմակերպությունների շահագրգռվածությունն ու պատրաստակամությունը մասնակցելու գործընթացներին, մասնավորապես՝ ուսանողների գործնական ուսուցումն ապահովելու գործում: Այս պահին մենք շարունակում ենք մեր աշխատանքները՝ ավելացնելով նոր ուղղություններ, որոնք համատեղ քննարկվում են վերլուծվում են ՀՀ Էկոն-միկայի նախարարության հետ:

- Ներկայում ի՞նչ փուլում է դուալ կրթական ծրագրի ներդրումը, եւ իրականացվե՞լ է արդյոք ընթացիկ գնահատում:

- Արդեն ավարտում ենք դասավորությունների եւ ղեկավարների համար նախատեսված ուղեցույցը՝ ինչպես մշակել եւ ներդնել դուալ ՄԿՈՒ ծրագրերը: Ձեռնարկում ներկայացված են պահանջարկի ուսումնասիրության, մասնավոր հատվածի կարիքների վերհանման, համագործակցության կայունացման, կրթական ծրագրերի մշակման, ինչպես նաեւ արդյունքների ամփոփման ու իրավասությունների ծանաչման գործընթացների իրականացման

քայլերը: Ներկայում մենք նաեւ աշխատում ենք երկու միության հետ, որոնք առավել առաջատար են իրենց ոլորտներում՝ Գինեգործության հիմնադրամը եւ Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամը՝ իրենց տեխնոլոգիաներով: Այս ամենի նպատակը մասնավոր հատվածի եւ կրթության ոլորտի միջեւ երկխոսության ձեւավորումն է եւ գործընթացների իրականացման համար անհրաժեշտ դերերի բաշխումը: Այստեղ կարեւոր է նաեւ հստակ գործիքակազմի կիրառումը, օրինակ՝ ոլորտի ուսումնասիրությունը եւ մշտադիտարկումը, նոր մասնավոր ընկերությունների ներգրավումը եւ այլն: Կարեւոր է գնահատել նոր ընկերությունների հնարավորությունները դուալ ՄԿՈՒ գործընկեր դառնալու տեսանկյունից՝ համաձայն հետեւյալ չափանիշների՝ արդյոք նրանք կարող են ապահովել անվտանգ պայմաններ ուսանողների գործնական ուսուցման իրականացման համար, առկա են բավարար ռեսուրսներ կրթական ծրագրին իրականացնելու համար եւ այլն: Դրան զուգահեռ՝ ՄԿՈՒ-ՁԱԿ-ում պետք է ստեղծվի ենթակառուցվածք համապատասխան ռեսուրսներով, որը որպես պետական մարմին կվարի տեղեկատվությունը եւ կմշակի դուալ ՄԿՈՒ կրթական ծրագրերի պահանջները եւ պայմանները:

Ներկայում կրթականացում ենք դուալ ՄԿՈՒ կրթական ծրագրերի փորձարկման վերջնական աշխատանքները, որոնք միտված են մշակելու եւ փորձարկելու ավարտական քննությունների անցկացումը մասնավոր հատվածի ներկայացուցիչներից կազմված անկախ հանձնաժողովի ներգրավմամբ:

2017 թ.-ից մեկնարկած ծրագրերը փորձնական փուլից հանելու նպատակով նախաձեռնել ենք օրենսդրական բարեփոխումների գործընթաց, որի ընթացքում վերանայման ենթարկվեց մասնագիտական կրթության եւ ուսուցման մասին օրենքը: Այն ամբողջապես նոր մտտեցում է բերում ՄԿՈՒ ոլորտ: Մշակված ՄԿՈՒ օրենքի նոր նախագծում ներկայացված հիմնական սկզբունքները, իհարկե, պետք է ամրագրվեն ենթաօրենսդրական նորմատիվ ակտերով, ուղեցույցներով եւ այլն:

Մենք նաեւ շարունակում ենք տեխնոլոգիաների հիման վրա նորարարական մտտեցումներ մշակել դուալ ՄԿՈՒ կրթական ծրագրերի իրականացման համար: Հյուրընկալության ոլորտում մասնագիտական կողմնորոշման իրականացման համար մշակեցինք վիրտուալ իրականության հիման վրա բավականին պարզ լուծում: Հետագայում հնարավորություն կընձեռվի տարածաշրջաններում աշակերտների եւ ուսանողների մասնագիտական կողմնորոշման գործընթացի ակտիվացման տեսանկյունից՝ հասանելի դարձնելով բարձր կարգի հյուրանոցների աշխատանքը:

շարունակությունը՝ էջ 8

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ ՀՀ Արարտի մարզի «Արբաթի Դուրիկ Ջաբարյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի դասվարի (17 դասաժամ) քիմիայի (6 դասաժամ), կենսաբանության (9 դասաժամ), ինֆորմատիկայի (6 դասաժամ), ֆիզիկուլտուրայի (22 եւ 15 դասաժամ) տեխնոլոգիայի (4 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակիցի հետ հարցազրույց անցկացնում առանձին:

Մրցութային մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Ձեւ 1), մեկ լուսանկար 3x4 չափի,

- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),

- ամեն հաստատող փաստաթուղթ, - «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքուկի պատճենը (առկայության դեպքում),

- ինքնակենսագրություն (Ձեւ 5),

- այլ պետությունների բաղաբացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

- ՀՀ արական սեռի քաղաքացիները նաեւ զինվորական գրքուկ,

- իրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթուղթ (առկայության դեպքում),

- որակավորման տարակարգ ունենալու դեպքում հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ եւ բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են բերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համարել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են **փետրվարի 8-ից մինչեւ փետրվարի 21-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 9:00-ից 14:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:**

Մրցույթը տեղի կունենա **փետրվարի 27-ին՝ ժամը 12:00-ին**, ՀՀ Արարտի մարզի Արբաթի Դուրիկ Ջաբարյանի անվան միջնակարգ դպրոցում, հասցեն՝ Գ. Արբաթ, 4-րդ փ., զ. 48:

Տեղեկությունների համար զանգահարել (098) 47-24-20 հեռախոսահամարով:

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ «Երեւանի հ. 102 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի դասվարի, պատմության (10 դասաժամ), Հայոց եկեղեցու պատմության (5 դասաժամ), հասարակագիտության (2 դասաժամ), երաժշտության (8 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակիցի հետ հարցազրույց անցկացնում առանձին:

Մրցութային մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Ձեւ 1), մեկ լուսանկար 3x4 չափի,

- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),

- ամեն հաստատող փաստաթուղթ, - «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքուկի պատճենը (առկայության դեպքում),

- ինքնակենսագրություն (Ձեւ 5),

- այլ պետությունների բաղաբացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

- ՀՀ արական սեռի քաղաքացիները նաեւ զինվորական գրքուկ,

- իրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթուղթ (առկայության դեպքում),

- որակավորման տարակարգ ունենալու դեպքում հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ եւ բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են բերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համարել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են **մինչեւ փետրվարի 20-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 9:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:**

Մրցույթը տեղի կունենա **փետրվարի 24-ին՝ ժամը 13:00-ին**, Երեւանի հ. 102 հիմնական դպրոցում, հասցեն՝ Բ. Երեւան, Ֆուչիկի 2-րդ նրբանցք 11:

Տեղեկությունների համար զանգահարել (010) 34-43-33 հեռախոսահամարով:

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Կոտայքի մարզի «Պռոշյանի Պ. Ղեւոնդյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի ինֆորմատիկայի (16 դասաժամ), տեխնոլոգիայի (14 դասաժամ), ֆիզկուլտուրայի (22 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Ձեւ 1), մեկ լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Համրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքուկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (Ձեւ 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքուկ,
- իրատարակված հողվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում հավաստող փաստաթուղթ:

Տեղեկությունները նախատեսված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են փետրվարի 8-ից մինչև փետրվարի 21-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա փետրվարի 23-ին՝ ժամը 14:00-ին, ՀՀ Կոտայքի մարզի Պռոշյանի Պ. Ղեւոնդյանի անվան միջնակարգ դպրոցում, հասցեն՝ Գ. Պռոշյան, Խանգջան 2:

Տեղեկությունների համար զանգահարել (093) 18-38-03 հեռախոսահամարով:

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Վայոց ձորի մարզի «Յերմուկի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի դասավարի (17 դասաժամ), ֆիզկուլտուրայի (14 դասաժամ), կենսաբանության (4 դասաժամ), քիմիայի (3 դասաժամ) ուսուցչի թափուր տեղի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Ձեւ 1), մեկ լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Համրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքուկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (Ձեւ 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքուկ,
- իրատարակված հողվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում հավաստող փաստաթուղթ:

Տեղեկությունները նախատեսված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:


Փաստաթղթերն ընդունվում են փետրվարի 8-ից մինչև փետրվարի 21-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա փետրվարի 23-ին՝ ժամը 12:00-ին, ՀՀ Վայոց ձորի մարզի Յերմուկի հիմնական դպրոցում, հասցեն՝ Գ. Յերմուկ, Սիրանյանի 7:

Տեղեկությունների համար զանգահարել (077) 19-01-69, (091) 19-01-69 հեռախոսահամարներով:

Կրթությունն աշխարհում

Մեծ Բրիտանիա



Secondary Education – Certificate of Secondary Education):

2015 թվականին պարտադիր կրթության վերաբերյալ օրենսդրությունը փոխվել է. նախկինում այն սահմանափակվում էր 16 տարեկանով: Այսօրվա սովորողները պետք է եւս 2 տարի անցկացնեն իրենց գրասեղանների մոտ: Նրանք, ովքեր նախատեսում են հնարավորինս արագ աշխատանքի անցնել, հաճախում են արհեստագործական քոլեջներ: Երկու տարի սովորելուց հետո նրանք ստանում են GNVC (միջնակարգ մասնագիտացված կրթության վկայական) կամ BTEC (միջնակարգ տեխնիկական կրթության դիպլոմ): Նրանք, ովքեր հետաքրքրված են բուհ հետագա ընդունելությամբ, մնում են դպրոցում պատրաստվելու ընդունելության քննություններին (Sixth form) (Վեցերորդ ձեւ, միջնակարգ կրթության վերջին երկու տարին է (12 եւ 13 տարի) Անգլիայում, Ուելսում եւ Հյուսիսային Իռլանդիայում: 16-18 տարեկան դպրոցականները պատրաստվում են A-level, IB կամ բրիտանական A-level համարժեք այլ քննություններին: Sixth Form ուսուցումը հնարավոր է ինչպես Անգլիայի միջնակարգ հանրակրթական դպրոցներում, այնպես էլ մասնավոր դպրոցներում): Այդ ժամանակահատվածում՝ 16-ից 18 տարեկան սովորողները պատրաստվում են ընտրված առարկաների A-մա-

կարդակի հանձնմանը: Ըստ ֆինանսավորման տեսակի՝ Մեծ Բրիտանիայի դպրոցները բաժանվում են երկու խմբի՝ պետական եւ մասնավոր: Ի տարբերություն շատ երկրների, Անգլիայի պետական եւ մասնավոր ուսումնական հաստատությունների միջև անջրպետն այնքան էլ մեծ չէ. միջնակարգ կրթության մակարդակը երկրում վերահսկվում է պետական մակարդակով: Թեեւ մասնավոր դպրոցներն առանձնանում են ավելի ուժեղ պատրաստվածությամբ՝ նյութատեխնիկական բազայի առկայությամբ, դասախոսական կազմի բարձր մակարդակով, դասերի անմիջականությամբ եւ նույնիսկ պատմական ժառանգությամբ, որով կարող են պարծե-

նալ գիշերօթիկ հաստատությունների զգալի մասը: Նրանցից շատերը աշխատում են ավելի քան մեկ դար, իսկ ամենահին հաստատությունները հայտնվել են 12-րդ դարում կաթոլիկ եկեղեցիների ենթակայության տակ: Հարկ է նշել, որ պատմականորեն Անգլիայում կար առանձին կրթություն: Որոշ մասնավոր դպրոցներ մինչ օրս պահպանել են այդ մոտեցումը. շատ բրիտանացիներ կարծում են, որ այդպես տղաների եւ աղջիկների համար ավելի հեշտ է կենտրոնանալ իրենց ուսման վրա: Հանրակրթական դպրոցները հիմնականում խառը ծեւով են:

Հարունակությունը՝ էջ 9

Շարունակվում է դուրալ համակարգի ներդրումը համակարգում

սկիզբը՝ էջ 7

- Ընթացիկ գնահատման արդյունքում զարգացման ի՞նչ հնարավորություններ եւ խոչընդոտներ եք տեսնում:

- Զարգացման տեսանկյունից տեսնում ենք, որ դուրալ ՄԿՈՒ համակարգը կարող է որակապես ավելի բարձր մակարդակ ապահովել կրթություն-մասնավոր հատված համագործակցության համար դարձնելով երկու կողմերի երկխոսությունն ավելի առարկայական: Մենք մոտեցնել ենք բեկունցային կետին, որտեղ կարող ենք արձանագրել երկու կողմերի հավանությունը փորձարկման արդյունքներին, սակայն դեռ շատ անելիքներ ունենք գործընթացների կայունացման համար:

Դուրալ ՄԿՈՒ համակարգի լայն ծածկույթը կարող են ապահովել խոշոր կազմակերպությունները, սակայն դրանք թվով այդքան չափ չեն: Հետևաբար ավելի ինտենսիվ աշխատանք է պետք տանել ՓՄՁ-ների շարունակական ներգրավման ուղղությամբ, որը ստեղծում է լրացուցիչ ծանրաբեռնվածություն ՄԿՈՒ հաստատության համար: ՄԿՈՒ հաստատությունը պետք է կարողանա համագործակցել բազմագործընկերային շրջանակի հետ, ինչը պահանջում է վարչական եւ դասավանդող կազմերից նոր իրավասություններ:

Հաշվի առնելով տնտեսական իրավիճակը՝ ոչ բոլոր գործատուները կարող են վճարել ուսանողներին, չնայած որ առկա են դեպքեր, երբ գործատուն ինքն է առաջարկել պայմանագիր կնքել ուսանողների հետ: Կարծում են, որ այստեղ նույնպես դեռ ունենք աշխատելու դաշտ:

- Ասացիք, որ արդեն կան ավարտված ծրագրեր: Իսկ ունե՞ք վերլուծություն՝ որքան է դուրալ կրթական ծրագրով շրջանավարտների թիվը, եւ նրանցից քանիսն է աշխատում իր մասնագիտությամբ:

- 2021թ. մենք իրականացրել ենք մշտադիտարկման գործընթաց, որի ընթացքում ամփոփվել են 2017-2021թթ. իրականացված ծրագրերը: Մշտադիտարկման սկզբում մշակվեցին գնահատման չափանիշների երեք հիմնական բաժինները՝

1. Ընդհանուր տեղեկություններ դուրալ ՄԿՈՒ ծրագրի մասնակիցների վերաբերյալ: Այս բաժնում ստացված տեղեկատվությունը հիմնականում վիճակագրական քանակական տվյալներ են կրթական ծրագրերն իրականացնողների եւ մասնակիցների մասին: Ընդհանուր՝ դուրալ ՄԿՈՒ փորձարկմանն ընդգրկվել է 647 ուսանող, 13 ՄԿՈՒ հաստատություն, 78 մասնավոր կազմակերպություններ, 4 մասնավոր հատված:

2. Համագործակցային հարաբերությունների առաջացման եւ ամրապնդման պայմանները: Այս բաժնում ամփոփված որակական տեղեկատվությունը հնարավորություն է տվեց գործընկերներին գնահատել եւ հասկանալ համագործակցության արդյունավետությունը եւ հետագայում բարելավել այն սահմանելով թույլ կողմերը: Հստակ տեսանելի է, որ համագործակցող կողմերի հաղորդակցման բարելավման եւ փորձի կուտակման ուղղությամբ աշխատանքները պետք է շարունակվեն ծրագրի կողմից:

3. Դուրալ ՄԿՈՒ ծրագրի կատարողականը: Ստացված քանակական եւ որակական տեղեկատվությունը հնարավորություն տվեց եզրակացնել արդյոք ուսանողների կրթության եւ զարգացվածության մակարդակները բավարար են իրենց ներկա կամ ապագա աշխատատեղի համար: Շրջանավարտների 37%-ը աշխատում է ըստ մասնագիտության, 26%-ը, ըստ մասնագիտության, շարունակում է կրթությունը եւ 32%-ը ենթակա է զինվորական ծառայության:

Բոլոր ստացված քանակական տվյալները միջինացված են, զբոսաշրջության ոլորտի ծրագրերը կազմում են գերակշռող մաս եւ չեն կարող համեմատվել գինեգործության ոլորտում ստացված արդյունքների հետ:

- Իսկ կա՞ հստակ թիվ, թե նրանցից քանիսն է մնացել աշխատելու հենց տվյալ գործատուի մոտ:

- Թվային տվյալներ չունենք, քանի որ նման հարցադրում չենք արել, սակայն կարող ենք ասել, որ հիմնական մասը մնացել է այդտեղ աշխատելու: Սակայն սա էլ է համագեցնում այն եզրակացության, որ պետք է ավելացնել գործընկեր կազմակերպությունների շրջանակը. եթե կազմակերպությունը փոքր կամ միջին չափի է եւ արդեն իր պահանջված աշխատողին վերցրել է աշխատանքի, ուրեմն պետք է նոր գործընկերներ գտնել:

- Հնորակալ եւ հարցազրույցի համար: Կցանկան՞ք որեւէ բան ավելացնել:

- Հաշվի առնելով սերմնափոխության եւ նոր տեխնոլոգիաների ներդրման հետ կապված գործընթացները՝ վստահ եմ, որ դուրալ համակարգն աշխատաշուկայում մրցունակ լինելու ավելի շատ հնարավորություններ կընձեռի երիտասարդներին: Մենք համոզված ենք, որ դուրալ կրթական համակարգը հնարավորություն կտա մեր ուսանողներին մնալ իրենց տարածաշրջաններում, զարգացնել դրանք, ավելի հաջողակ լինել եւ հեռանկալներ ունենալ:

Հեղինակ՝ ՅՈՒՆԻՍԵՖ

Փորձիր լրացնել

Պատմություն, աշխարհագրություն

Ուղղահայաց

1. Պարսից շահ՝ ... 2-րդ, ուն կողմից 360-ական թթ. ավերվեց Արտաշատ մայրաքաղաքը, իսկ բնակչությունը գերեվարվեց: 2. Պետություն եւ լիճ Կենտրոնական Աֆրիկայում: 3. Պետություն Հարավային Ամերիկայում, որը առաջինը ճանաչեց Հայոց ցեղասպանությունը: 4. «4-րդ գնդի հրամանատար քաջ Քեռի, ինքը ... եւ գործերդ միշտ բարի, սրտանմլիկ լուրը տարին ցավալի, Քաջանց քաջը պանծալի» («Քեռիի երգը»): 5. Հայ իշխան Սմբատ ..., ով 987 թվականին հիմնադրեց Սյունիքի թագավորությունը: 7. Հեթանոսական հայերի նշանավոր սրբավայրը, ուր դրված էր Անահիտ աստվածուհու ոսկեծուլ արձանը: 9. Ավստրիայի մայրաքաղաքը: 10. Հայագի տիեզերագնաց: 12. Խոշոր գետ Եվրոպայում (132 կմ): 15. Էթնիկական նույն ծագումը, պատմական հայրենիքը, լեզուն, մշակույթն ունեցող մարդկանց հավաքականությունը: 16. Լիճ ճապոնիայի-Հոնսյու կղզում: 17. Գողթն գավառի գյուղերից (այժմ Նախիջեւանի հնքնավար Հանրապետության կազմում): 20. Բագրատունիների թագավորության հիմնադիրը ... Ա Սեծ: 22. Հույն պատմիչ, ով ճանաչված է որպես «Պատմության հայր» (մ.թ.ա. 484-մ.թ.ա. 425 թթ.): 24. Հայ ազատագրական շարժման գործիչ, առաջին ֆիդայիներից (1880-ական թվականներին): 26. Նավահանգստային եւ առողջարանային քաղաք Բուլղարիայում: 28. Նույնանուն գետ եւ քաղաք Թաիլանդում: 29. Կիրճ Արեւմտյան Հայաստանում, որով անցնում է Արեւելյան Եփրատը: 31. Գավառ Մեծ Հայքում, այն հայաթափ է եղել 1915 թ. Մեծ եղեռնի ժամանակ: 33. Գետ Ռուսաստանում, որը միացնում է Լադոգա լիճը Բալթիկ ծովի Ֆիննական ծոցի հետ: 36. Դաշտ Արարատ նահանգի Բագրեւանդ գավառում, ուր 371 թ. տեղի է ունեցել ճակատամարտ հայկական զորքի եւ պարսկական բանակի միջեւ: 37. Բնագետ եւ բժիշկ: Դորպատի համալսարանի ռեկտոր, ով Խ. Աբովյանի հետ 1829 թ. սեպտեմբերի 27-ին բարձրացել են Արարատ լեռան գագաթը: 40. Ուղղահայաց փոստատար աղավնի՝ Շեր ... Առաջին համաշխարհային պատերազմի վերջին տարում, Արեւմտյան ռազմաճակատում, աղավնի կատարել է բազմաթիվ «թռիչքներ»՝ հասցնելով կարեւորագույն նամակներ: 42. Գետ Չինաստանում եւ Ղազախստանում: 43. Բանտ-ամրոց Փարիզում, որի գրավումով սկսվել է ֆրանսիական Մեծ հեղափոխությունը: 44. Բրիտանական տրանսպորտային շրջանավ. որ 1912 թ. ապրիլի 15-ին խորտակվեց Ատլանտյան ովկիանոսում, իսկ լող 1496 մարդու կյանք: 45. Հյուսիսային սառուցյալ օվկիանոսի ծովերից: 47. Հայրենական մեծ պատերազմում հերոսի կոչման արժանացած առաջին հայ զինվորը ... Չախչախյան: Երկու գետերի՝ Օկայի եւ Կոլգայի վրա գտնվող քաղաք: 52. Գետ, որի վրա կառուցված կամրջին ժողովուրդը դիմավորել է Մետրոպ Մաշտոցին: 53. Կիլիկյան Հայաստանի մայրաքաղաքը:

Հորիզոնական

6. Իմաստության եւ ողջախոհության հայոց հեթանոս աստվածուհին: 8. Գյուղ Մեծ Հայքում՝ Տղմուտ գետի աջ ափին, որի մոտ գտնվող դաշտում 451-ի մայիսի 26-ին տեղի է ունեցել ...-ի ճակատամարտը: 9. Քաղաք Վայոց ձորի մարզում: 11. Վասպուրականի վերջին գահերեց իշխան, ապա՝ Վասպուրականի հիմնադիր թագավոր ... Ա. Արծրունի: 13. Լեռ Հայկական լեռնաշխարհում (2332 մետր): 14. Արցախի նախարարական տան նախահայրը: 15. Քաղաք Սեւ ծովի ափին: 18. Բարեխառն գոտու փշատերեւ անտառները: 19. Հայ ազգային-ազատագրական շարժման գործիչ՝ ... Դուման: 21. «Ի՞նչը կհաղթի կյանքում հերոսին, թե չլինի կինն ու ...» (Հովհ. Թումանյան, «Թմկաբերդի առումը»): 23. Քաղաք Արցախում: 25. Ջրանցք, որ միացնում է Սիջերկրական ծովը Կարմիր ծովին: 27. Շախմատի աշխարհի չեմպիոն (անունը)՝ 1963-1969 թթ., նրա մականունն էր «Երկաթե ...»: 29. Հայկական լեռնաշխարհի ամենաբարձր լեռը: 30. Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի խորհրդանիշ ծաղիկը: 31. Համայնք Ֆրանսիայում, ուր գտնվում է նշանավոր համալսարանը: 32. Նորվեգացի բեմադրաբան, հայ ժողովրդի Մեծ բարեկամ, ով մինչեւ իջ կյանքի վերջը զբաղվել է փախստականների հարցերով: 34. Հնագույն քաղաք Փոքր Ասիայում, ուր մ.թ.ա. 13-12-րդ դարում տեղի է ունեցել հանրահայտ պատերազմը: 35. Քաղաք Դրինում: 38. Կղզի Մալայան արշիպելագում: 39. 17-րդ դարի վանք-ամրոց Ու-

տան Հայոց գավառում, Խոր ...: 41. Լեռ հայկական լեռնաշխարհում՝ Վանա լճի ափին, որին գերմանացի աշխարհագրագետ Սորից Վագներն անվանել է «Հայարտ լեռ»: 46. Ամազոնի ավազանի գետերից: 48. Ֆիջի պետության մայրաքաղաքը, այն գտնվում է Վիտի Լեու կղզու հարավարեւելյան ափին: 49. Սյունաց խշխանուհի, ով 999 թ. կառուցել է տվել Գնդեւանքի փառահեղ տաճարը: 51. Քաղաք Նիդեռլանդներում: Այստեղ է գտնվում արդարադատության միջազգային դատարանը: 54. Գետ Հայկական լեռնաշխարհում՝ Սեւ ծովի ավազանում: 55. Վանի թագավորության արքա՝ ... Ա. (Մենուա թագավորի որդին): 56. Այսպես են կոչվում Խաղաղ օվկիանոսի հարավում Պոլինեզիայում գտնվող կղզիները:

Կազմեց՝ Վոլոդյա ՆԻԿՈՂՈՍՅԱՆԸ

